

ԲԱԺԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆԻՆ
 Պաշտարանի համար 12 ձր.
 Վեցամսեայ 6 »
 Արսասահմանի համար Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Ամերիկայի համար Տարեկան 3 ռ. 50 ց.
 Վեցամսեայ 1.50 »
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ
 Իրանացու սոյր առարկի երեսին համար 40 սանթրիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթրիմ է. երեսին սանթրիմ սակարկելու համար 20 Օլո գնդը կըլլայ:

ՇԱԲԱԹ

Պատկերի և դրամի դրվիկ
 Խմբագրությունը հասցեի
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)
 —
 Գրութիւնք և չիւ սրտիւր

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱԴԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՐՇԱՐՔԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՈՐԵՐԸ
 ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Պաշտարանի համար ձեռքի
 (15 ՍԱՆԹԻՄ)

Արսասահմանի համար ձեռքի
 (20 ՍԱՆԹԻՄ)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր բաժանորդներէն, որոնք վճարած չեն, կը խնդրենք անյապաղ զրկել բաժանորդները, որովհետեւ առաջին վեցամսեան կը լրանայ. Բաժանորդները պէտք է հասկնան որ թերթը ստակով կը լլայ:

ԱՆՊԱՏԿԱՌ ՄԵԾԱՎՏՈՒԹԻՒՆ

Մեր մէջ՝ հասարակական ամենակնճառ խնդիրներն և մեր կեանքի պատմական ամենաբարդ երեւոյթներն մասին կտրուկ և վճռողական կերպով այնպիսի գոհնիկ, անտաշ գլուխներ են վճիռներ արձակում որ փոքր ի շատէ քաղաքակրթված ու զարգացած մարդը մնում է շարժման այդպիսի մի անպատկառ մեծամտութեան առաջ:

Վերջինք մեր վերջին տարիների կեանքը, և կը տեսնենք որ մեր յեղափոխութիւնը ու յեղափոխական մտաւորութեան քննադատողները մեծ մասամբ զանազանակերպ «հաճի աղաներ» են և շարժիներ:

Գերմանիայի Ծիրտէները, Ֆրանսայի Միլրաբոները, Անգլիայի Գլադստոնները, Իտալիայի Մաձինիները այնպիսի յանդգնութեամբ չեն քննադատել իրենց ժողովրդի կեանքի պատմական յեղաշրջումները և հասարակական գործիչներին, որպիսի յանդգնութեամբ չափում, ձեւում, դատաւարում և կտրում են մեր մանր ու խոշոր «հաճի աղաները»: Մերոնք այնքան անպատկառ մեծամիտներ են որ չեն հաւանում ոչ մի գործի, ոչ մի կազմակերպված մարմնի և ոչ մի գործիչի. երբէք տրամադիր չեն ստեղծված գործը շարունակել, հաստատված մարմինների մէկի մէջ մտնել և իրենց շնչին ու շարժումը զորք գործ ընտրել ու աշխատել. ընդհակառակը միշտ նորը

ստեղծելու տրամադրութեան մէջ են, եղանակները քանդելու տենչով այրվում են, որովհետեւ իմէ արդէն գոյութիւն ունեցող մարմինների մէջ մտնեն, պէտք է անհետանան ինչպէս ջրի կաթիլը ովկիանոսի մէջ և իրենց սնափառութիւնը յազուրդ չը պէտք է ստանայ:

Այդ անպատկառ գոհնիկ մեծամիտները եւս առաւել անտանելի են, եթէ «քէօռ» բախտի շնորհիւ, հերոսութեան տիտղոսի աժան տարիներում, հերոս փառապան մակերին են ստացել մեր ժողովրդից այն ժամանակ, երբ թուրքի կողքովը անցնող հայը Հոմերոսեան Արիլէս էր համարվում: Այդ տեսակները կատարեալ պատուհաններ են. դրանց պէտք է պահել, կերակրել, շարունակ հոսող առանց աղի արցունքները սրբել, ապուշութիւնները գովաբանել. թէ չէ, կառնեն դրիչը, չորանի դաւապանի փոխարէն, կը մրտեն թղթերը, կը բանան հոտած բերանները և զարշահոտութիւնը կը տարածեն ամեն տեղ: Մեր ժողովրդի արտագրած ամենագլուխի ախպերն են այդ միջին «տեղերը տաքցնելը» միշտ արտատախտի արքերով, հառաչող, սուտ քրիստոսի կերպարանք առնող, սիրելի աղջ, սիրելի հայրենիք, սուրբ յեղափոխութիւն բարբաղող անպատկառ մեծամիտները:

Բարբախտաբար, այդ տեսակների ժամանակը անցաւ. և անդառնալի կերպով: Այսօր դրանք որչափ կատարեն, որչափ հառաչեն, որչափ արտաովեն, մեր հասարակական կեանքի մէջ գործուն գեր չը պէտք է կարողանան խաղալ Գրանք միայն մի մի «յիշատակարան» ախպեր են մեր այն սերնդի, որ ի խմորի մեծ մասը արեւելեան կեղծիքն էր և փառամոլութիւնը շաղխուած արեւելեան տգիտութեամբ: Գրանցուած զնասն էլ այնքան մեծ չը պէտք է լինի, որովհետեւ շատ շատ, իրենց փառամոլութեանը բուսականութիւն տալը համար, պէտք է գործիք գառնան այս և

այն խորամանկ հասարակական աճապարներին ձեռքերում, որոնցից արդէն հայ հասարակութեան տաղվ մասը սկսել է փախչել, ինչպէս ժամաօթարից:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐՓԻԱՐ

Անցեալները ընկերներէս մին Կերմանական օրացոյց մը ցոյց տուաւ, որուն մէջ անցեալ տարու նշանաւոր դէպքերը թուականով գրի առնուած էին:

Անշուշտ հայկ. ահաբալի կտորածները, որոնք ամեն տեսակ նկարագրութիւն պաղգապէս կը ծաղրեն, չէին կրնար վրիպել հեղինակին աչքէն: Սուլթանին, հլու հպատակներուն և սիրելի բարեկամներուն ամենամեծ ճիգն եղաւ դէպքերը բոլորովին տարբեր գոյնով ցուցնել: Սուլթան քաջալերուած... այս բարեկամներէն համարձակեցաւ նաեւ թրքական կտորած հաշակելու, ժամանակ մը կարծեց որ յաջողած է իր հնարած անշափ սուտին մէջ: Սակայն չէ՞ որ անաչառ պատմագիրը չկրնար անտարբեր անցնիլ այդ սոսկալի կտորածներու ճշմարտութեան մասին: Եւ ահա այսօր դէպքերու ցանկին մէջ անցած են հայկ. կտորածները ու պատմութեան մէջ ալ առելի մանրամասնորէն պիտի ներկայանան ապագայ սերունդին, որ ծուռ նայուածք մը պիտի ձգէ «քաղաքակրթ» ու «մարդասէր» եւրոպային եւ նա մանաւանդ Չարին, Վիլհելմի ու Հանթլոյին վրայ: Անտարակոյս թրքասէր հայերն ալ չպիտի զրկուին իրենց ինկած այս իրաւացի բաժինէն... Խոշորկէք կտոր մըն ալ Օրմանեան սրբազանիւնին ու իրեն մերթ բարեկամ մերթ թշնամի Արթինին կը լլայ...

Ժողովրդի մը համար որ դիտէ գերութեան շղթաները քակտելու ջանալ, մահացու լուծը թու

թափել, կտորած իր տեսակներովը անխուսափելի է: Չայս կապացուցանէ պատմութիւնը և չայս կը հաստատեն մեզ ժամանակակից եզրող ազգերը, որոնք միեւնոյն հարկեցուցիչ պարագաներու ներքեւ գտնուած են. բայց չմոռնանք նաեւ որ հայ ժողովուրդը դեռ այդ հասուն աստիճանին հասած չէր, որ կարենար ջարդուած առնել ջարդել, ու դեռ ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը ըմբռնած չէր և կամ քիչ, ուստի կարելի չէր որ ինք իրեն կտորման պատճառ ըլլար:

Հապա ո՞վ եղաւ կտորածներու գլխաւոր պատճառը և կա՞մ ո՞վ արդարացոյց զայն:

Երբ անկեղծ հայ մը ինքնիրեն հարցը կուզէ, կամայ ակամայ կանգ կառնէ ծանօթ տեղափոխական Արփիարի վրայ:

Հայ մը, ան ալ յեղափոխական գործիչ, թշնամիներու խորհրդով իր անձնական գծուած շահին համար իր ի նպատակ ար աղջին՝ մի վատ դեր ստանձնած է, որը ընդհ. յեղափոխութեան մէջ անպակաս չպիտի մնայ... Ի՞նչ ստորնութիւն...:

Գէպքէն յետոյ օտար լրագրի մը թղթակիցը կը գրէ որ ցոյց կազմողները, ցորքան եւս պալատական ստոյգ աղբիւրներէ իմացայ, հայերը չեն, այլ թուրքերը, առաջինները վերջիններուն գործիք եղած են...:

Տխուր իրականութիւն... թէ հայ եւ թէ օտար պատմագիրը հայ յեղափոխութեան այս մասը նմանը չտեսնուած սե՛ւ, սե՛ւ, էջերով պիտի գծեն ու Արփիարի անձին ալ սեւ տողեր նուիրեն: Ամօթ հազար անգամ ամօթ որ այս տեսակ անպատուաբեր ու իր տեսակին մէջ եղական մի դէպք «հայո յեղափոխութեան մէջ տեղի կունենայ և այդ տեսակ մի վատ դեր ստանձնողը «հայ» կեղծ յեղափոխականն է... Ան որպէզ զային պատու ու արժանապատուութեան տարրական զգացումէ զուրկ չէ, շատ լաւ կարող է հասկնալ այս ամենը:

Արփիարի մասին հայ լրագիր-

ներու մէջ—բայց ո՛չ Արփիարա- կան ուղղակի կամ անուղղակի օւղաններու—բաւական գրուած է. ըստ որում հարկ չեմ համարեր Արփիարին ուղղուած այդ արդար նախադրեցները, որոնք սակայն Արփիարի վրայ և ոչ մի բարե- բար արգիւնք ունեցած են, կրկ- նել: Մենք մինչ հիմա ըմբռնած ըլլալու ենք որ ինչ կերպով որ ալ անոր մօտենանք, զինքը ինք- նաճանաչութեան բերել անկարե- լի է, բայց միայն...

Յած հոգի մը, ինչպիսին է Արփիարինը, չկրնար հայրենի- քի ազատութեան վեհութիւնը զգալ. բարոյապէս ախտաւոր սեւ սիրտ մը չկրնար աղգային գե- րագոյն շահի համար բարախել, բայց ճիշդութեան միտքը յե- ղափոխութիւնը տապալելու հա- մար կը հնարէ (աւա՛ղ անյաշող) միջոցներ: Որովհետեւ ան պարտք կը համարի թերեւս իր սկսած յաւիտենապէս արգահա- տելի գործին մէջ կատարեալ ըլլալ: Արփիարի համար ամեն տեսակ վատութեան մէջ ծայրա- յեղութիւն չկայ... բաւական է որ անոնց մէջ իր անձնական շա- հը ու «եսո՞ր հեռատեսէ: Վասն ամենամեծ վնասուց ազգին կըս- տանձնէ ամեն տեսակ վատ գե- ր, աղգասիրութեան ու յեղափոխու- թեան պատմութեան ինչ տակ: «Աղ- գին վնասը իմ շահո՞ւ», այս է նշա- նաւոր տեղափոխականին նշանա- բանը...

Անոնք որ Արփիարի վրայ քիչ թէ շատ վատաշուծիւն ցոյց տալ կերեցնեն ու կուզեն Պատուոյ Ատեանի միջոցաւ անմեղ հոգա- կել զայն, կամ չափազանց միա- միտ են և կամ արտաքոյ կարգի շարամիտ... ի՛նչ խայտառա- կութիւն մի աղգասպան հրէշի համար «պատուոյ ատեան» պա- հանջել...

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

ՄՇՈՅ ՍԵՆՈՐԻ ԱՆՏԳԵՐ
ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՅԵՏՈՅ, ՈՒ
ՅԵ՛ԱՓՈՒՈՒԹԵԱՆ ԾԱԴՈՒՄ
—
ԺԹ.

Ի՞նչ էր այդ բողոքը, որ հայ գիւ- ղացին առաջնորդարանի միջամտու- թեամբ իր խիստ բողոքաբերով նոր կուսակալին կը դիմէր, անոր ուշադրութիւնը հրաւիրելու. ոչ ի՛նչ, եթէ ոչ մէկ զեար ալ 1875 թուա- կաններու ձմրան միջոցին առած վեց զրուցով գարնան վճարելու պայ- մանաւ. իսկ գարնան երբ գիւղացին ստակ կուտայ, թիւրքը շտապէր, կատարէ թէ ուրիշ կարեւոր տեղեր գործածէ, այժմ ինձ պէտք չէ, մենք իրովայն ենք: Քանի մը տարիներ այսպիսով թիւրքը քաշկուտելով, կը կրկնէ ու կրկնապատկէ, մինչև որ իր հաշուով 50 ոսկեայ կը հասցունէ, և մէկէն օր մը հայու գիւղը կիջնէ

Արգարեւ «աղգային» կուսակ- ցութիւն մը աղգային երկպառա- կութիւն միայն կրնայ սարքել: Երբ Զօպանի հռչակաւոր թեր- թին վերջին թիւը աչքէ անցու- ցի, հանդիպեցայ «պատուոյ ատ- եանին», յորում Պ. թիւրքաէր զրագէտը խիստ անհամբու- թեամբ Իոկէնտէր և Յաբոբեանը «անաչառ» հռչակած է: Զօպանը որ նամակը ինքզինքը կը մատնէ, հռչակաւոր շովինիստի անաչառ ամականով օժտելն ալ բաւական է Արշակը ճանչցողներուն հա- մար «պատուոյ ատեանին» անա- չառ անձնաւորութեանց կողմէ առաջարկուած ըլլալը մակարե- րելու... լաւ գիտենք թէ «անա- չառ» Զօպանեան բառարանին մէջ ինչ կը նշանակէ... Ար- գէն աս Արփիարի գործակա- տարը ե՞րբ մի աղգօգուս ձեռ- նարկի արձագանք եղած է, որ- պէտքի այսօր ալ իր «անաչառ» հռչակումին հաւատք ընծայել կարենանք:

Լաւ կրնամ գուշակել թէ Ար- փիար իր այս անյաշող միջոցին վրայ ի՛նչ տեսակ «ա՛խ» մը կը քաշէ: Նոր սատանայութեան կը սպասենք... Դո՛ւն, Արփիա՛ր, որքան կուզես խորհէ քու աղգա- վնաս նպատակիդ հասնելու հա- մար, միջոցներ հնարէ, փոս փորէ, բայց ոչ խորունկ, որպէս զի աւելի խոր չիլնես մէջը...

Այնքոյն յեղափոխականին, դո՛ւն սրտիդ մէջ վառ պահէ արդար վրէժի քայցր զղացումը: Ո՛չ Արփիար ու իր արբանեակները և ո՛չ ալ Սուլթանը պիտի կրնան զայն խլել:

Հայրենիքի ազատութեան Սրբ. գաղափարը հալածել, ոչնչաց- նել, ստեղծու կոտորածներու,

ու 50 ոսկին կը պահանջէ: Հայը յան- կարծակիի գալով կայլալի, ինչ ը- նելն չը գիտէ. և բուն ձեռով հայուն ձեռքէն միջոցաւ թեան մուրհակ մը կանէ, ինչ որ ցանէ կէսը իրեն ըլ- լայ, և այսպիսով երեք չորս տարի- ներ շարունակելով 150 ոսկեայ կը բարձրանայ. միւս կողմէն հարեւա- ւոր քիչ ցորէն տանելէ յետոյ, և 150 ոսկեայ փոխարէն ալ հողային կալուածներու կոչանքը կը գրաւէ: Իսկ երկրորդ մը 1878 թուականին երեք զեար թիւթիւն առնելով և քանի մը տարի մնալէ յետոյ՝ այն ևս առաջինի օրինակին հետեւելով, 100 ոսկեայ միջոցաւ թեան մուրհակ մը կանէ բունի. 4—5 տարուան մէջ 300 զեարէն աւելի շահելով, այն ևս հայու արտերու կոչանքը կը գրաւէ. այսպէս և շատերն, որ Մշոյ գատա- բանի մէջ 1889 թուականին ստանակ վկանելով հաստատուեցաւ: Սյոք մի- ջոցին գատարաններու մէջ քննու- թիւնները ի նկատի առնելով Բաուֆ փաշան, թիւրքերէն բունի ձեռով հա- յերու գրաւած կոչանքները յետո առ- նելով, իրենց տէրերուն յանձնեց, թիւրքերուն ալ դառնալով կրէ՛ զուրք առնելիք մը չունիք ասոնցմէ,

բռնութեան գործ չէ: Այս ամե- նը վաղանցիկ են. բայց յաղթա- նակը գաղափարին է և ո՛չ բըռ- նաւորին: Հեռուներու մի ստուար շարք արգէն իրենց դիւցազնու- թեամբ արտադրած են այն շու- գին, որով պիտի դառնայ հայ յեղափոխութեան մեքենան և որ զքեզ յառաջ կը մղէ անվրդով...

Խ. ԿՈՉՄՈՍ
Վիլնէլմստորթ, 12 Յունիս

ՓԱՐԻՉԵԱՆ ՔՐՈՒԿ

Անգրիկա Տէր Մարտինեանց. — Փա- րիզի հայ ուսանողութեան վրայ գրուած յօդուածներն, առհասարակ, ընդհանուր ակնարկութիւններ եղած են, որոնց մէջ կը վարագործուին պարտաճանաչ և անխիղճ ուսա- նողներու անուններն հաւասարապէս. ու անա այդ պատճառով իսկ է որ այս տեղի ուսանողութիւնը գէշ համ- բաւ մը ունի, ամեն կողմ: Եթէ բաղադրանքներու անունները հրա- պարակ արուէին ու վարկաբեկ ընէ- ին, արժանաւորները չպիտի սու- ժէին այնքան որքան կը տուժեն հի- մա: Անգրիկա Տէր Մարտինեանց (Երեւան քաղաքէն) անպակքներու կարգէն է. 3—4 տարի է որ Փարիզ կը գտնուի և ահաւասիկ իր ամբողջ պատկերը:

— Անցած տարի Սալոնը արձան մը ներկայացուց ու դիպուածաւ յաջո- ղեցաւ, (դիպուածաւ կըսեմ, որով- հետեւ արձանը խեղճ ու կրակ բան էր ու իր բաղդին այդ տարի արձան ներկայացնողները խիստ քիչ էին): Մտքով ու զարգացումով զերօ եղող այդ աղեկը, պատուհաս մը դարձաւ հայ հասարակութեան գլխուն: Հա- մեստութիւն և պատիւ մէկ կողմը դրած այս տարի միեւնոյն արձանին մարմարեայ կամ պղնձեայ շինելու գաւթ է վիճակահանութեան գնելու համար ու սոմսեր չքեղ սպազորած՝ աստիս անդին ալ ծախել է: Վիճակահանու- թեան օրը, Ապրիլ 15, հասաւ ոչ մի բան տեղի ունեցաւ...: Չեմ հաս-

եթէ իմանամ որ դուք կրկին այդ տեսակ գաղափարներ ի գործ դնէք, գիտցած ըլլաք որ զձեզ այս երկրէն պիտի քարոզեմ:

Սյոք ընկալեցա՞ր և ուղղութեամբ, Բաուֆ փաշան, հազիւ թէ մէկ տարի կըցաւ ապրիլ իր պաշտօնի մէջ: Այդ կարճ շրջանի մէջ ամբողջ տաճկու- թիւնը իր դէմ լարուեցաւ, իրենց հետ ունենալով կառավարութիւնը զինուորականութիւնը, շատ մը դա- ւադրութիւններ սկսան սարքուիլ, փաշան օր առաջ հեռացնելու, որով 1900 թուականին՝ արդէն իսկ գէպի մասին, Մուշէն տարիկանութեան կողմէ դաւադրեալ հեռագիր մը սըր- ուեցաւ Պիթիլիսի փաշային թէ՛ «Մշոյ գաղափարները գիտե՛ր կը վաղն, մէկը ջուր, իսկ միւս երկուքը արիւն, և եթէ ժամ առաջ, առաջը շտապուի, երկրորդ Գարատաղ մը կը դառնայ. սպաստարութեան ծայրը փրթած է, հայերը քիւրտերը խոտի պէս կը հնձեն»: Յանկարծակի փաշան այս- պիսի հեռագիր մը առնելով կը շուա- րի, և մէկէն կառավարական շրջա- նակի մէջ ժողով մը կազմելով, հե- ապիբը միջանկ կը բերէ, և կը հարցնէ թէ՛ «Ի՞նչ ընել պէտք է, այս

կնար թէ ի՛նչպէս Տ. Մարտինեանց արտօնութիւն մը կրնայ ստանալ ֆրանս. կառավարութեան ասանկ գործի մը համար որ «հանրային օգ- տակարարութիւն» չունի: Թողու՞ք այս, ի՛նչ հարկ մարմարեայ արձան շինել և չախտախիլ այս տարուայ Սալոնին ներկայանալ ուրիշ գործով մը: Եթէ միջոց չունէր ի՞նչու այդ բանի ձեռնարկեց ու յայտնա կրկնապատ- համբաւ մնաց... թո՞ղ սպասին իր սոմսերը գնողները...:

Միշտ հայ «ուսանողի» սյուսին է որ կը ոսնահարուի:

Լեւոն Եղիազարեան. — Ահաւասիկ մէկն ալ որ արգահատանքի արժանի է. բառին թովանդակ նշանակու- թեամբ չփացած մը: Ժողովրդական երգերու հրատարակութեան ձեռնար- կող մը պէտք է ամէն բանէ առաջ անոնց հայրենիքը ուսուցիչ ստիւքով լինի. պէտք է այդ հայրենիքին պատմութիւնը գիտնայ, երգերը զը- րոզներուն լեզուէ իմանայ ու ըն- դուհակութիւնը կը շտապ լինի: Բայց որո՞ւ համար են այս խօսքերը. Եղի- ազարեան կը հաւաստեն չափազան- ցութիւն չիկայ բնաւ ըսածներուս մէջ, թողու՞ք օտարը, իր հայրենի լեզուէն իսկ բառ մը չիմանար, ստու- րագրութիւնն իսկ յաճախ, կը վա- բանի ճիշդ գրած լինելուն...: Յա- ուաջառնը (Հաւաքածոյին) ուրիշները գրած են, երգերը ուրիշները պատ- րաստած են, ու Եղիազարեան ստու- րագրած փառաբարապէս Այս պատ- ճառ մը չէր սակայն որ գործը ար- տաքին փայլուն զիրքով և սկսանից զուրս չիգար, ու ընկերացած ճոճը- ուն «աէքլամ»ով մը թէ երկրորդ գիրքը Մայիս 15ին (այսօր Յունիս 8) և մնացածները այսինքն ամբողջ վեց գիրքերը (․․․) ամենակարճ ժա- մանակի մէջ պիտի երեւին: Գարձ- եալ Շարժում իր արարչուր ծանու- ցումը կրնէ այդ հրատարակու- թեան մասին (ինչպէս ըրած էր անցած տարի), թէ արիւնը մէջը մեռած գործ է դա: Առաջին գիրքը ըստ ծանուցման փոխանակ 1899 ձեռագրերին լոյս տեսնելու 1900 Յունուարին ալ, Փետրվարին ալ լոյս չպիտի տեսնէ ըսաւ Շարժում, ու իրականութիւնը զայս հաստատեց, որովհետեւ հազիւ այս տարի ապրիլ- շարժման առաջին առնելու, ժողովը միաձայնութեամբ կը պատասխանէ թէ՛ «մենք բան մը չենք կրնար ը- նել, դուք պատասխանատու էք, և միանգամայն տեղի տուիք հայոց այս- պիսի յանկարծակի շարժման, հետեւ- ւարաբ կրնար գուր Պօլիս Բ. Գուռը հեռագրել և այն տեղէն անմիջական դարման սպասել, մենք պատասխա- նատուութեանէ զերծ ենք»:

Բաուֆ փաշան այս կարի և կըս- րուկ հակասական պատասխան ստա- նալուն պէս, փոխանակ ինքն Մուշ ինչպիսի և ինչպիսին իր նոյնու- թեամբ ուսուցիչներու, ու ըստ այնմ իր քայլն առնելու, մէկէն Գ. Գուռը Մշոյ ստացած հեռագրի իմաստն սեղեկապրեց հեռագրաւ մը և ան- միջական խնդրոյն վրայ ուշադրու- թիւն հրաւիրելով, անհրաժեշտ զի- նուորական գուհետեւու Մուշ զըր- կուիլը պահանջեց:

Բ. Գուռը այդ հեռագիրը ստանց վարանման ի նկատի առնելով, Գ. զօրարանակի հրամանատար Զէքի փաշային, անմիջական ձեռք առնու- լիք հրահանգներ տուաւ, որով Զէ- քին 36 աւուր մէջ, փոքր հայքէն սկսեալ մինչև կիլիկիա հեռագրու մը

լին կէսին երեւցաւ : Եղիազարեան Փարիզի մէջ գրամ—բաժնեգիրն հաւաքելու հոր միջոց մը գտած էր սակայն . կը զրկէ հաւաքածոյին Ա. գիրքը իր ձեռքը ինկած հասցէներուն ու անոնց անունով «Թրէթ»ներ չինելով Գոնէտի—Լիօնէի պանքային կը յանձնէ : Ետեւ որ այդ գրամատան հետ գործ ունենալով պաշտօնեային ներկայանալուն , առանց ուշադրութիւն ընելու թուղթին եւ ինչ անձի կողմէ զրկուած լինելուն , կը վճարեն : Աղքատ հայ կին մը , միեւնոյն պաշտօնեային այցելութիւնը ստանալու պատահա կը լինի . մինչև որ մէկը կուգայ ու եղելութիւնը բացատրելով պաշտօնեան կը ճամբէ :

2. Յ. Երգերի հաւաքածոյին «սեսլութիւն» բառ մը կը շրջի ամեն կողմ , փափաքելի էր իմանալ ի՞նչ ո՞վքեր են այդ համեստ անձնաորութիւնները որ «անպատճառ» իրենց անունը ծածկել կուզեն . . . Ժողովուրդին աչքին փոշի ինչո՞ւ փչել . . . Եղիազարեանի հաւաքածոյին պարզ ձեւը ուրիշներ ցոյց տուին . պարզ երեւցաւ որ այդ պարունը փոխանակ հայ հանճարը ծանօթացնելու օտարին զայն պիտի մնտէ . ազգային պատիւը գրականութիւնը պիտի նսեմացնէ (կարգաքէջ Համալսարան գիտական եւ գրական ամսագրերին կողմէ) : Ինչ որ արտասովոր բաժինը : Կը հրատարակէր Փարիզի մեր լրջամիտ հայրենակիցները որ ջանան կարող համախմբով մը . այդ օրինակ հրատարակութեան մը ձեռնարկել , եթէ նախանձխնդիր են մեր ազգային պատիւին , որ մի ինչ որ Եղիազարեանի ձեռքը խաղալիք է դարձեր : Գործը մեծ գործ է , ու պատասխանատուութիւնը այնքան մեծ , որ իմն անսարքերութիւնը մեղք է : սճրագործութիւն : (7)

Այս անգամ ալ այսքան : ԴԱՌՆԻԺ

(7) Գանի որ Պ. Եղ. գործը սկսել է , թէև պակասութիւններով հանդերձ աւելի լաւ չը լինէր որ կարող անձերը նրան օգնէին եւ սկսածը յառաջ տանէին , քան թէ մի նորը սկսէին : Մեր մէջ ո՞ր նոր գործը առանց պակասութիւնների է սկսվում : Ծ. Խ.

«ԻՐԱՆՈՒՆՔ»Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻՆ ԱՌԹԻԻ

«Իրանուք»ի 42 թուոյն մէջ «գաւաճառ»ութիւն ազգային օրէնքին եւ եկեղեցւոյ անկախութեան գէժ մը վերնագիրը , իբր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ պաշտօնէայ , զիս հետաքրքրեց , կարծել տալով որ մի՞ գուցէ ամենամեծ զեղծում մը պատահած է մեր եկեղեցական շրջանակին մէջ : Բայց վերջին հատուածը եկաւ կասկածա փարատելու եւ ցոյց տալ թէ՛ Բազարճըզի թաղականական շնչին գէպքն է որ այդքան խոշորցած է , մանաւանդ իմ անձիս շուրջը գարձած խմբմանքներով միտսին , եւ նկատուած :

Բազարճըզի ազգայինները զիս պաշտօնավարելու հրաւիրած օրէն , մէկ երկու անձինք աշխատեցան միշտ ինծի հակառակ ընթացք բռնել թաղուն նպատակաւ , ու սարիւղէտուան մէջ իրենց քանի մը համակիրներ ալ շահելով սկսան մասնաւոր շրջանակի մէջ եւ հրապարակաւ—որոնց , զժառուգաբար , «Իրանուք»ն ալ քանիցս արձագանքեղաւ—զիս խմբել , ջանալ իմ ամէն մէկ խօսքիս , քայլի բոստակ մէկ մէկ նպատակ փնտռել : Մինչև հիմա , իբր պատասխան միայն անտարբերութիւնը եւ անարգող լուութիւնն ընտրեցի , որովհետև այդ գրպարտիչ—գրութիւններն իսկապէս արժանի չէին պատասխանելու , ինծի չէին ալ հասնէր :

Այս անգամ , ինծի հակառակորդ այդ մասը , վերջին թաղականի ընտրութեան խնդիրը

իր ձեռքը իբր թէ զէնք ըրած , սկսաւ ամէն ճշմարտ գէպք խմբել , խեղաթիւրել , մտքերը պղտորելու համար , որոնց , ինչպէս ըսի «Իրանուք»ն ալ արձագանք բլլալէն զատ , այս անգամ , շատ ցաւալի է որ , գէպքերը գիտակցաբար կը խեղաթիւրէ եւ . . . խմբագրականով :

Ճշմարտութիւնը պարտք կը գնէ վրաս ամէն ինչ նոյնութեամբ պատմել :

«Նարժուք»ի 207 թուոյն մէջ տեղւոյս Թաղ. Խորհրդոյ ընտրութիւնը յիշուած է : Պատրիարքարանի հրահանգին համաձայն ընտրութիւնը չի կատարուելու համար , ես նոյն օրը թողուցի եւ հեռացայ ժողովէն : Կատարուած զեղծումին գէժ 38—40 ստորագրութիւն պարունակող հանրագրութեամբ մը բողոքեց ժողովուրդը Պատրիարքարանին . ընտրողական ժողովին մէկ մասն ալ ժողովրդին պահանջը շեշտեց , նորէն Պատրիարքարանին դիմելով . նոյն անձինք միեւնոյն տունն Գեր. այցելու հովիտին հեռադրեցին , ինչպէս նաեւ ինծի դիմեցին ազգու կերպով , հայառակ պարագային ամէն պատահակամութեանց պատասխանատու պէտք էր մնալ : Իսկ ընտրողական ժողովին մէկ մասը եւ հակառակ կողմը ընտրութիւնը օրինաւոր ճանչցնելու յանց Պատրիարքարանի դիմելով : Չեմ ուզեր խօսել կարգ մը անպատուութեւր արարքներու վրայ , որոնց զիմելով խմբողները սպառնացին զիս իրենանց Երմաճաճոյից ծառայեցնել :

Ես միշտ , ըստ կարելոյն , ջանայի հանդարտեցնել բողոքող ժողովուրդը , յորդորելով որ Պատրիարքարանի հրահանգին սպասեն : Երբ Եղ. Պատրիարքարանի ապրիլ 27 թուակիր

գրութիւնը մայիս 1ին ստացայ (7) որով ընտրեալներուն բացի մէկէն , մնացեալներն կը վաւերացնէր : Նպատակաւարմար սակեցի երկու կողմի ընտրողական ժողովոյ անգամը հրաւիրել համերաշխութիւն մը գոյացնելու համար , եւ հապա գործի սկիւղի եւ յիբաւի նոյն օրը հրաւիրեցի յիշեալները ժողովի , որոնք ինչպէս միշտ , նոյնպէս եւ այժմ անհամաձայն մնացին : Աւտոի ես խնդրոյն արդիւնքը տեղեկագրեցի Սղգ. Պատրիարքարանը եւ Գեր. այցելու հովիտին : Անկէ վերջ ընտրեալներէն Տ. Կ. Մ. Յարութիւնեան հրաժարեցաւ :

Ժողովրդի բողոքող մասը իր ակնկալութեան հակառակ արդիւնք տեսնելով Մայիս 13ին գիմեր են տեղական կառավարութեան . այս լսելուս պէս , Մայիս 16ին պէտք եղածը աղգ. պատրիարքարանի եւ Գեր. Այցելու հովիտին հաղորդեցի եւ աշխատեցայ խնդրոյն առաջը առնել : Մայիս 24ին Պ. Գուրպէթեան տեղըս ինձ պատահեցաւ , որուն առաջարկեցի թէ՛ երկու կողմի պարագլուխներն հրաւիրեմ եւ իրենց մէջ համերաշխութիւն գոյացնելու ինքն ալ աշխատի : Տ. Յ. Գուրպէթեան խոյս տուաւ , առարկելով թէ՛ «Թերեւս փորձանքի մը տեղի առած կըլլանք» : Գարձեալ յիշեալ Պարունը իմ զգուշական ընթացքիս ալ իրա-

(7) Անցողակիր ըսեմ որ , «Իրանուք»ի մէկ թղթակցի , սակէ քանի մը շարժով առաջ , բացարձակապէս կը բաւ , երբ կուզէ հաւատարմել թէ՛ ապրիլ 27ին եկած է նամակը : Ինչ նամակը կը մնայ , որուն թուականը ապրիլ 27 է , բնականաբար հետագիւր չէ որ միեւնոյն օրը գայ : Պ. Գուրպէթեանն ալ կարգաց այդ նամակը :

վարկենական բէտիֆը գէնքի ներքեւ կանչել տուաւ , եւ ճանապարհ հանելով գէպի Մուշ զրկեց . եւ 36 աւուր մէջ , մինչև 40,000 զօրք լեցուց , ինքն եւս առանց ետեւէն Մուշ մտաւ , իր վիճակտեի պահանջին ծրագիրը իրագործելու , եթէ պզտիկ նշոյլ մը իսկ նկատուելու ըլլայ հայոցս կողմանէ :

Բառք փաշան Բ. Գրան տուած հետագրէն ի զատ , երկրորդ հետագիր մըն ալ Մուշ ոստիկանութեան եւ զինուորականութեան տուաւ , հրամայելով թէ՛ «չուս ընդ փոյթ զօրաց լոկատ մը ճանապարհ հանելով թընդանութիւնով միտսին , ապատարուվայր իջեցուցնեն , հապճէպով պաշարման ենթարկեն , եւ ի պահանջել հարկին անբաղձեն եթէ պզտիկ ընդգիտութեան մը նշաններն իսկ ստանուին , որպէս զի այդ ապատարութիւն չըլլայ որ իր լայն ծառայն տանելով , այլեւս անկարելի ըլլայ իրենց առաջին առնուլ . եւ որքան որ կըրնան սահմանափակ վիճակի մէջ պահեն , մինչև որ զինուորական ուժը այդտեղ իջնէ եւ կա զայրէ» :

Ոստիկանութիւնը . . . զինուորականութիւնը՝ այդ հետագիրն անն-

լով , մէկ ալայ զօրք չորս թնդանութիւններով մէկտեղ , 24 ժամէն յետոյ , ճանապարհ հանեց գէպի արդենիս , անդ հասնելով գիւղը պաշարման մէջ առին : Երկու օր պաշարման վիճակի մէջ մնալով ընդամենութեան մը պզտիկ նշոյլ իսկ չի տեսն , որով ոստիկանութեան կողմէ հրաւեր կարգացուցաւ անձնատուր ըլլալու : Այդ հրաւերը ստանալուս պէս , գիւղի մէջ գտնուած երկու իրենքէն քանի մը անձնատուրութիւններ , բանակ անցան եւ հրամանատարին պաղ արիւնութեամբ մը ներկայանալով , առանց պատճառի անակնկալ պաշարման մասին իրենց ցաւերն յայտնելէ յետոյ , ինչոյ իրն իր նոյնութեամբ բացատրեցին , եւ քանի մը երիտասարդներու մէջմտեցին անհետանալն եւս բողոքեցին , առարկելով թէ՛ այդ քիւրտերու ձեռամբ սպանուած են : Յաւելելով թէ՛ «այսօր փոխանակ մենք բողոքելով կատաղութեան ուշադրութիւնը մեր վրայ հրաւիրելու , ընդհակառակն իրենք մեր երիտասարդներ սպաննելէն յետոյ , կրկին իրենք կատաղութեան վազեցին բողոքելու , եւ զմեզ սպտամբ ժողովուրդ ցոյց տալու» : Կարգինացոյց

կողմէ եղած այս իրաւացի եւ արգար բողոքին փոխանակ կարեւորութիւն տալու , ընդհակառակն գիւղին աչք զարնող մարդիկն՝ որոնք որ ձեռքերնին անցաւ ձեռքակալելով ի վերջոյ զօրաց հրաման տուին զիւղին մէջ խուժելու , եւ արածուցին կողակալելու , ստեղծուելու , մէկ խօսքով ամէն բան զօրաց կամացն ձգելով : Եւ այսպիսով 5—6 օր զօրքերը անդ մնալով , ամէն բան հիմնայտակ ըրին . ու 30է աւելի մարդիկ եւս ձեռքակալելով յետս վերադարձան :

Միեւնոյն ժամանակ ալ քրտականութիւնը առիթէն օգտուելով ամբողջութեամբ սկսան շարժիլ , գէնք ի ձեռին հայ գիւղերու վրայ խուժելով կողոպտելու , քանդելու , այլեւս կարգ եւ կանոն վերցուցաւ , կատաղութիւնը ձեռակերպութեամբ մը ինքզինք այդ խուժանի հանդէպ անզօր հաշակելով պարզ հանդիսատեսի մը դերը կատարեց . իսկ զայանի կերպով քիւրտերուն ուժ կուտար : Այս եղանակաւ ամբողջ հայ գիւղերը իրենց անստանալով մէկտեղ պաշարման վիճակի ենթարկուեցան , երթեկութիւն գաղթեցաւ , ամէն տեսակ անկարողան գործողութիւնները խզ-

ուեցան , մարդասպանութիւնները սկսան պատահել , գիւղերնը քիւրտերը խուժելու խուժելու հայ գիւղերու վրայ յարձակիլ սկսան , իսկ ատոր հանդէպ հայ գիւղացին , որքան որ պաշարման վիճակի գատապարտուած էր , միեւնոյն ժամանակ ալ իրենց գոյութիւնը պահպանելու համար , այդ յարձակմանց գէժ իրենց ուժով կը գիմարէին . երբ երկու ըլլար , այդ խաղաղ եւ հարիւրաւոր տարիներ մեռելութեան գատապարտուած Մշոյ գաղար բողոքովին կը փոխուէր , գնտակներու սուլումներ օղը կը թընթացնէին . երկուսն սարուկը , այսօր մահը աչքն առած՝ ապկառ մը դարձած էր . այլեւս իրենց յարկին ներքեւ գիւղերը վերջացաւ , ամէն երկու կողմէ , երիտասարդ , հարս եւ աղջկուք ձեռք ձեռքի տուած մէկմէկու սիրա տալով իրենց թաղերու մէջ , տանիքներն լեցուած , յարձակողական բողոքին կը սպասէին : Մահը այլեւս իր նշանակութիւնը կորսնցուցկարծես թէ հարսանիքի եւ ուրախութեան բողոքներու նոր թուական մըն էր բացուած :

ՄԱԿԱՐ ՅՈՒՂԱՆՆԵՍԵԱՆ (Շարունակելի)

ւտնք առաւ (**) : Վերջը Տ. Գուր- պէթեան ընտրութիւնը օրինա- ւոր չի ճանչցող ժողովրդին հեա ալ տեսնուեցաւ , որոնց իրաւունք տուաւ շուտով , ուր ես միմիայն ունկնդիր էի և խոստացաւ միւս կողմի անձանց հետ ալ տեսնուել , որ արդէն գիշերուընէ անոնց քով իջեանած էր , զանոնք հա- մոզել , որպէս զի կամ հրաժա- րին եւ կամ իրենց թւոյն վրայ ժողովրդեան կողմէն պակաս ան- դամներն ալ ընտրուելով թա- զականաց թիւը եօթի լրացուի և արդիւնքը խօստացաւ ինձ հա- ղորդել :

Վերջապէս յետոյ , մայիս 26ին ստացայ ազգ. պատրիարքարա- նէն և Այցելու հովիւէն հարկ ե- ղած հրահանգներն , և անմիջա- պէս ընտրեալներն իրենց պաշ- տօնին գլուխը հրաւիրեցի . ո- ռոնք հրաժարեցան :

Կը պաւլոս որ , Տ. Յ. Գուրպէթե- ան այս ամենը յստակ կերպով գիտնալէն յետոյ , հրապարա- կաւ կը խեղաթիւրէ իր խմբագ- րութեամբ հրատարակուած թեր- թին մէջ և իմ անձս ալ կը խըծ- րըծէ . ինչ որ պատիւ չի բերեր հայ թերթի մը :

Ես մինչեւ հիմա ջանացած եմ համերաշխութիւն արծարծել ժո- ղովրդեան մէջ , և իմ սահմանիս մէջ , իբր հայ եկեղեցւոյ զրօ- շակակիր , աշխատած եմ անոր դրօշը պահպանելու և բարձր բռնելու ամէն նախանձախնդրու- թիւն յոյց տալ : Բայց կերեւայ թէ , Տ. Յ. Գուրպէթեան հակա- ռակ կողմին չի կրնալով լուսը հասկցնել և շուշելով անոնց «խաթըր» կտրել . . . անհամա- ձայնութիւնները ինձի վերադ- րելով հրապարակաւ զիս յանցա- ւոր կը հռչակէ : Ինչո՞ւ զէպքերը ատանկ խոշորացոյցով մեծցնել և «խեղաթիւրելով» ալ հրապար- ակել մտքերը պղտորելու հա- մար :

Ահա լոկ ազգային կամ եկե- ղեցական հանգամանք ունեցող խնդիրին բուն իսկ ճշմարիտ ե- ղելութեան մասին իմ խօսքս ժո- ղովրդին անկեղծ և բանիմաց դատուն : Ասոնցմէ դուրս , լոկ իմ անձիս շուրջը դարձած կռկոց- ներուն չեմ զիջանիր պատառ- խանելու , համոզուած ըլլալով որ , կայ ժողովրդին մէջ լրջամիտ դաս մը , որ զիս ճանչցած է և գիտէ ալ սուտը ճշմարտութենէ զանազանել :

Մնամ աղօթարար
Գևորգ Մ. Վ. Նալպանտեան
Թ. Բաղարճըզ , 9 Յունիս

Յ. Գ. Մէկ օրինակ ալ «Իրա- ւունք»-ի զրկած եմ :

—)(—

(**) Այս խօսքը Պ. Գալուստ Գաս- պարեան ուսուցիչին ներկայութեան եղաւ :

«ԻՄԱՒՈՒՆՔ»-Ի ՊԱՏԱՍ- ԽԱՆԱՏՈՒ ԽՍՄԱԳՐԻՆ

Ձեր պատասխանատուութեան ներքեւը խմբագրուած թերթին ա- մէն մի տողին ճշգրութեանը երաշխա- ւոր էք (**) : Այդ անխղճօրէն յերիւր- ուած զրպարտութիւնը որ ընտրու- թեանց ժամանակը գործած խաղա- խաղիւնու երևաւ կը հանէ , ի՞նչ փաստերով պիտի հաստատէք :

Պիտի կրնաք Սօֆիայի երեք պատ- ուաւոր հայի ստորագրութեամբ այդ բողոքին ստուգութիւնը վաւերա- ցնել : չէ թէ այդ ստայօղ զրպարտու- թեան հեղինակութեանը զուք պիտի շաղկէք :

Գուցէ ձեր անվերապահ անկողմ- նակալութիւնն է որ Գաշնակցական մը վարկաբեկ ընելու համար այս- պիտի ստոր գէնքերու գործածուած օ- րինական կը սեպէք :

Գիտեմ , այդ ետզմայի փարցալի աէբը սրտի հին մորմոք մը ունի ինձի դէմ , քանիցս անխնայ ու արդա- րացի մտարկուելուն համար . ողոր- մելին նպատակաւոր ատիթ մը կը կար- ձէ ինձի դէմ յարձակելու , բայց չա- րաչար կը խաբուի :

Չզայնել տուէք իրեն թէ փողո- ցային պողտուքին կարեւորութիւն չեմ տար եւ ստորնութիւն կը համար- րեմ Գուրպէթեան անուն անձին պա- տասխանել :

Սուտը . զրպարտութիւնը ու լու- տանքը երբէք չեն կրնար իրեն նման խարդախ անկողմնակալներու գոյու- թիւնը պահպանելու համար իբր կոռուան ծառայել :

Սօֆիայի ներկայ ազգային դար- մանի կարգաւ վիճակովը , որ եկեղե- ցին պարտքի տակ կը հեծէ , ամէն հայ հետաքրքրուելու իրաւունք ունի , որովհետեւ զա հասարակական է եւ ոչ կուսակցական :

Ես ամէն բանէ առաջ հայ եմ , եւ ձայնս ոչինչ առնչութիւն կրնայ ու- նենալ պատկանածս կուսակցութեան ծրագրին հետ :

Ընտր. ժողովոյ ուշադրութիւնը կը հրաւիրեմ այն կէտին , թէ իբրեւ անդամ սա ժողովին . ինձի վրայ կը բեռցուի զրպարտութիւն մը , ի՞նչ ի՞նչ խարդախութիւններ գործելուս . սա ժողովի պատուածանաչ անդամ- ները պիտի՞ համակերպին սա ան- ուանարկիչ խեղաթիւրումներուն :

Պահանջելու իրաւունք ունիմ , քանի որ լրագրական նիւթ դարձած է սա խնդիրը . ընտրութիւնը բե- կանող արձանագրութիւնները հայա- րակութեան բացատրուին :

Թ. Ղ. Ս. Ա. Կ. Ի. Տ. 21 Յունիս

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Լ'Արմէնիին կը հաղորդէ որ դե- րասան Պ. Գալֆայեան «ժուրնա- լի» սրահին մէջ Հա. մէթի դերը կատարած միջոցին հրաշալի ծաղկեփունջ մը ստացեր է իր- մով սքանչացող ֆրանսացիներէն և շատ ծափահարուեր է : Ծեր Բարիլդի մը յայտարարած է որ «Գալֆայեան հողով դերասան է եւ երկու տարի աշխատելէն , ու ֆրանսական շեշտը կատարե- լապէս իւրացնելէ վերջը կա- տարեալ պիտի ըլլայ : Պ. Գալ- ֆայեան Լօնտրա գացած է Շէ-

քըսբերի տրամները հոն ներկա- յացնելու :

—Բօլաը Գասանեակը «Օթօրի- թէ» ֆրանսական յայտնի թեր- թին խմբագիրը «Հայաստանի թալանումը» վերնագրով յօդ- ուած մը տպագրած է իր թեր- թին մէջ , որ կը վերաբերի թուր- քերու տուրքը հաւաքուած հրէ- շաւոր ձեւերուն , որոնց ուղղակի հետեւանքը կը համարէ հայկա- կան ապստամբութիւնը :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բեթերպուրդի մէջ կը խօսուի թէ արտաքին գործոց նախարար Մուրադիէֆի յանկարծական մահուան պատճառն է չինա- կան խռովութիւններու պատճա- րած յուզումը , ինչպէս հայե- րունը Լօպանֆի պատճառ եղաւ :

Մուրադիէֆի պաշտօնի թեկ- նածուներու մէջ կը յիշուի եւ Պոլսոյ ներկայ գեսպան Չինո- վիէֆ , որը սրտանց կատէ թէ Մուրադիէֆի և թէ անոր վարչու- թիւնը :

— Գերմանական կայսրը չա- վազանց կատաղած է Չինաստանի դէմ գերման ցեսպանի սպան- նուելու համար և յայտարարած որ մինչեւ գերմանական դրօշակը Բէքիւնի զլխուն չը ծածանի , Գեր- մանիան չի կրնար գահանալ :

— Թարուի Գերմանական նա- ւախուժքին հրամանատարը յու- նիս 17ին հեռագրած է թէ Բէ- քիւնի գեսպանատան թղթատարը կը հաղորդէ որ Չինական մասը հրդեհուած է , Բէքիւնի առջեւ 30 հազար չին զօրք հաւաքուած է , այրի կայսրուհին փախած է :

— Թուրք-Պարսկական սահմա- նազլխէն կը հաղորդեն թէ Պարս- կական քիւրտերը խուժած են Թուրքիա՝ և թուրք զօրքերու հետ ընդհարում ունեցեր են , ու ռու միջոցին քիւրտերու զխա- ւորն թէմուր խան սպաննուած է :

— Թիէնցիւնի մէջ կսպասուի 30000 չին զօրքերու յարձա- կումը :

— Էրնայ կայսրը և այրի կայս- րուհին փախուած են Բէքիւնի պա- լատին մէջ : Փողոցները և հրա- պարակը Պօքսէրներու և Իշխան Թուխանի ձեռքն է :

— Եւրոպական պետութիւննե- րը Չինաստանի մէջ հիմա ունին 13,500 զինուոր . 65 զաշտային թնդանօթ , 30 մեծ թնդանօթ- ներ , և 1000 հնդկական զինուոր :

— Անգլիոյ մէջ կարծիք մը կայ որ Հարաւային Աֆրիկէի պա- տերազմները վերջանալէն յետոյ զինուորական նախարար ընտրեն Լօրա Չէմպրէյնը , որը իբր կու- րովի մարդ պիտի կարողանայ անգլիական զինուորական գոր- ձերու մէջ անհրաժեշտ փոփոխու- թիւնները մտցնել : Ռամկավա- րականները հակառակ են այդ

տրամագրութեան , որովհետեւ կը վախնան թէ զինուորականութիւ- նը Չէմպրէյնի պէս մարդ մը գլուխ ունենալով շատ պիտի բարձրանայ և յետոյ , Չէմպրէյն թերեւս պատճառ պիտի ըլլայ Անգլիային շատ մը պատերազմ- ներ սկսելու :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բարիկի մէջ մտտերս նոր բացուած է հայկական ընթերցարան մը ուր կը գտնուին 30է աւելի օտար եւ հայ լեզուով լրագիրներ : Հասցէ՝ Հայկական ընթերցարան Գամբանեք Բրեմիէս փողոց Թիւ 9 Բարիկ

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԱՐՈՆ

Հին եւ նոր Ազգ. երգերու զին Չֆր- սոյն երգարանը կը ծախուի Վառնա , Ա. Չարպանէլեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ զարդանկան եւ վիպական գրքեր . դրամի փոխա- րէն կընդունի նաեւ նամակագրում . Գնում եւ վաճառում ամէն տեսակ գործածուած նամակագրոյններու : Նաեւ Շարժուելը կը ծախուի Ա. Չարպանէլեանի գրատունը եւ խըմ- բագրութեանս մէջ :

ՄԻ ՍՈՒՏ ԵՒՍ

— Վառնայի Հայերէն Հուզուող իր վերջին համա- րով յայտարարել է թէ «հայասէր» Դրագուլէվ իմ դէմ դատ է բացել , եւ իբր թէ հայտարար գատաւորը այդ պարտին եւ ինձ երկու անգամ կան- չել է հաշտեցնելու . բայց Դրագուլէվ մերժել է : Նախ որ այդ «Տ. Դրագու- լէվը» չը պէտք է չփոթել իսկակաւ հայասէր նիկոլա Դրագուլէվի հետ , որ Իրաւունքի պատասխանատու էր եւ վերջեւս թողեց . . . Հուզուող յայ- տարարած Դրագուլէվը այն Դրագու- լէվն է որ Գուրպէթեանի հետ մի- երկու համար Պուրկար-հայերէն թերթ հանեցին՝ երկու ժողովրդի աչքին էլ թող փչելու համար եւ յաջողութիւն չունեցան , որովհետեւ մարդիկ հիմա այնքան էլ միամիտ չեն . . .

Այդ Հուզուողի Դրագուլէվի հետ ես ոչ դատ եմ ունեցել , ոչ հայտարար գատաւորի մօտ գնացել և ե ոչ մի բան : Թէ այդ Պարսը ինձ դէմ դատ է բացել , այդ էլ չը գիտեմ . թերեւս ուրիշներ զէմ լինի , որոնք այդ պարտին հաշիւ են պահանջել կամ նոյն իսկ ոչինչ չը լինի :

Յամենայն դէպս եթէ Հուզուողի եղածի խմբագիրը այդ հարազմի լուրը մէջ տեղ է գցել , որպէսզի Դրա- գուլէվով մեզ սարսափեցնէ , շատ է սխալվել : «Կատուն միայն մկների մօտ է գաղան» : Դրագուլէվ եթէ գողանար Ստրանջայի ստակները ես ի՞նչ կարող էի իմանալ . քանի որ այդ մարդու հետ գործ չեմ ունեցել և «Ստրանջայի» հաշիւներ չեմ քննել : Ե ոչ մի տեղեկութիւն չունենալով Դրագուլէվի հաշիւներ մասին , ի՞նչ- պէս կարող եմ ասել թէ Դրագուլէվ 40,000 հազար բարի է գողացել : Յամենայն դէպս բարի յաջողութիւն նազմածուն եւ Պետր Դրագուլէվին :

ԱՐՎԱՆԻ